

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ

ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ԱՌԱՐԿԱՆ ՄԱՅՐԵՆԻ

ՀԵՂԻՆԱԿՆ ԸՆԴՈՒՑՆԱԾ ՇՈՒՐԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐԶ ԱՐԱԳԱԾՈՆՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԼԻԼԻԹ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Բովանդակություն

Ներածություն	2
Գլուխ 1.Թելադրության տեղն ու դերը տարրական դպրոցի մայրենիի դասընթացում	3
1.1 Տարրական դպրոցում կիրառվող թելադրության տեսակները	3
1.2 Տարրական դպրոցում կիրառվող թելադրության տեսակների դասակարգումը և ընդհանուր բնութագիրը	12
1.3 Թելադրությունը որպես կրտսեր դպրոցականի ուղղագրական կարողության ձևավորման միջոց	17
Գլուխ 2 Կրտսեր դպրոցականների ուղղագրական կարողությունների ձևավորումն ու նրանց ներկայացվող պահանջները	20
2.1 Ուղղագրության ուսումնասիրման մեթոդները տարրական դպրոցում ընդհանուր բնութագիր	20
2.2 Կրտսեր դպրոցականների թույլ տված ուղղագրական սխալները և նրանց կանխման մեթոդիկան	23
Առաջարկություններ	30
Եզրակացություն	31.
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	32

Ներածություն

Հայտնի է ,որ մարդու գրագիտության մակարդակը հիմնականում որոշվում է նրա անսխալ թելադրություն գրելու կարողությամբ :Անսխալ գրելու կարողության ձևավորման գործընթացի հիմքը հիմնականում դրվում է տարրական դպրոցում , թե կրթության այս օղակի մայրենիի ծրագրում նախատեսված չէ ուղղագրական գիտելիքների և կարողությունների յուրացում :

Այդպիսով , մեր ավարտական աշխատանքի թեմայի **արդիականությունը** պայմանավորված է դեռևս տարրական դպրոցում կրտսեր դպրոցականների գրագրության ուղղությամբ որոշակի ձեռքբերումների անհրաժեշտությամբ և այդ գործընթացում թելադրություն գրելու կարողության ձևավորման անհրաժեշտությամբ: Մեր ավարտական աշխատանքի **նպատակն է** ներկայացնել տարրական դպրոցում կրտսեր դպրոցականների գրագիտության ձևավորման գործընթացում թելադրությունների դերը, մշակել ուղղագրական կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական երաշխավորություններ:

Մեր նպատակին հասնելու համար մենք մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները :

1. Ուսումնասիրել ավարտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ առկա մեթոդական գրականություն :

2. Կիրառել թելադրության տեսակները և ներկայացնել դրանց դասակարգումը տարրական դպրոցի ուսումնական գործընթացում:

3. Բացահայտել կրտսեր դպրոցականների դժվարությունները թելադրություն գրելու գործընթացում և ներկայացնել դրանց կանխման մեթոդիկան:

Մեր ավարտական աշխատանքի ուղղությամբ ուսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք **հետևյալ մեթոդները** .

- թելադրության և մայրենի դասերի ունկնդրում և արդյունքների վերլուծություն,
- փորձարարական դասերի մշակում,նախապատրաստում և վարում ,
- ձեռքբերումների դիտարկում:

Մեր ուսումնասիրություններն անցկացրել ենք Արագածոտն մարզի Կոշ գյուղի միջնակարգ դպրոցի տարրական դասարաններում :

Ուսումնասիրությանը մասնակցել է 30 աշակերտ:

Գլուխ 1. Թելադրության տեղն ու դերը տարրական դպրոցի մայրենիի դասընթացում

1.1 Տարրական դպրոցում կիրառվող թելադրության տեսակները

Տարրական դպրոցում թելադրություն գրելու կարողության ձևավորումն սկսվում է դեռևս առաջին դասարանում՝ գրաճանաչության շրջանում: Այս փուլում կիրառվում է թելադրության ամենապարզ տեսակը, որը հիմնականում ունի երեխաների հնչյունային լսողությունը զարգացնելու նպատակ :

Ներկայացնենք տարրական դպրոցում կիրառելի թելադրությունների տեսակները.

Տարրական դասարաններում կիրառվող թելադրությունները լինում են.

- ուսուցողական (ուսումնական նյութերի որևէ բաժնի շուրջ)
- թեմատիկ (ստուգողական՝ կիսամյակում 4 անգամ)
- ամփոփիչ (կիսամյակային ամփոփիչ, կիսամյակի վերջում):

Դիտարկենք այս տեսակներն առանձին- առանձին:

Ուսուցողական թելադրությունները, ինչպես երևում է անունից, սովորողների ուղղագրական հմտությունների զարգացման գործում հետապնդում են բացառապես ուսուցողական նպատակներ:

Կիսամյակային, թեմատիկ թելադրությունները գերազանցապես նպատակ ունեն պարզելու մեկ կիսամյակի ընթացքում աշակերտների գրավոր խոսքի զարգացման աստիճանը:

Դեռևս 20-րդ դարի 60ական թվականներին Ա: Տեր-Գրիգորյանն ուսուցողական կամ սխալները կանխող թելադրությունները բաժանել է 12 տեսակի [3]

1. Հնչյունային (լսողական) թելադրություն
2. Նախազգուշական թելադրություն
3. Դիտողական թելադրություն
4. Տեսողական թելադրություն
5. Բացատրական թելադրություն
6. Ինքնաթելադրություն
7. Ազատ թելադրություն
8. Ստեղծագործական (հորինողական) թելադրություն
9. Ընտրովի թելադրություն

10. Համակցված (կոմբինացված) թելադրություն



11. Բառային թելադրություն

12. Բառ-թելադրություն [7]

Մեր մանկավարժական երկարամյա փորձառությունն ու հատուկ նպատակով ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նշված թելադրություններից շատերը «ձևական են», այսինքն, նշված տարատեսակների մեջ էական տարբերություն չկար[3]:

Արդի մեթոդական գրականության մեջ, ըստ անցկացման բովանդակության, նշվում է երկու խմբի թելադրություն՝ *սովորական և ստեղծագործական*: Իսկ ըստ անցկացման նպատակի՝ *բացատրական և ստուգողական* [տե՛ս Գծապատկեր 1.1,]:

Գծապատկեր 1.1



Տարրական դպրոցի համար ստեղծված և երաշխավորված ինչպես ուսուցողական, այնպես էլ ստուգողական թելադրությունների ժողովածուներում [2,7,8] նախատեսված են, և ուսուցիչը հնարավորություն ունի ընտրել թե՛ արձակ, թե՛ չափածո ստեղծագործություններ: Թելադրության համար ընտրված բոլոր բնագրերն՝ ունեն հատուկ ուսուցողական նպատակներ, ինչպես նաև դաստիարակչական, ճանաչողական և զարգացնող արժեք:

Թելադրության տեսակն ընտրելիս մենք առաջնային ենք համարում որոշակի դասարաններում տվյալ տեսակի անցկացման գերխնդիրները՝ հաշվի առնելով այն նպատակները, որոնք նախատեսված են տվյալ դասարանի՝ հենց այդ փուլում:

Ուսուցողական և ստուգողական թելադրությունների (թե՛ ընթացիկ, թե՛ տարեվերջյան) նպատակներն արտահայտված են ըստ առանձին բաժիններով տրված նյութերի՝ համապատասխան վերնագրերում:


Դիտարկենք թելադրության նշված տեսակների առանձնահատկությունները:

1.Սովորական թելադրություններ

Այս թելադրություններն, ըստ էության, ուսուցողական թելադրություններ են, որոնց նպատակը աշակերտներին ուսուցչի կողմից թելադրած նյութն անսխալ գրի առնել սովորեցնելն է. Այս միջոցով աշակերտներն իրենց լսածը կարողանում են գրագետ գրի առնել:

Սովորական թելադրությունները լինում են երեք տեսակի(տե՛ս Գծապատկեր 1.2).

Գծապատկեր 1.2



Դիտարկենք սովորական թելադրություններից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

1. **Հնչյունային թելադրությունն** ուղղագրական վարժություն է, որի ժամանակ աշակերտներն ուսուցման առաջին փուլում ուսուցչի օգնությամբ (բարձրաձայն), այնուհետև ինքնուրույն հնչյունային վերլուծության են ենթարկում թելադրվելիք բառը, ապա կատարում են համադրում: Այս կարողությունն ըստ էության ապահովում է գրելու և կարդալու կարողությունների հիմքը: Գրելու ընթացքում երեխաները գրում են՝ առաջնորդվելով վայելչագրական և ուղղագրական կանոններով: Այսպիսի թելադրություններ աշակերտները գրում են առաջին դասարանից, սակայն դասարանից դասարան թելադրության համար առաջադրվող նյութը բարդանում է:

Մենք մեր մանկավարժական տարիների ընթացքում համոզվել ենք, որ թելադրության այս տեսակը հատկապես արդյունավետ է դարձնում վրլուծական աշխատանքը:

Հնչյունային թելադրության անցկացման մեթոդական քայլաշարը հետևյալն է.

- 1) Թելադրվող նյութի ընթերցում ուսուցչի կողմից (ողջ բնագրի բովանդակության ընկալման նպատակով).
- 2) Թելադրության նյութի երկրորդ ընթերցում՝ համադրային-լեզվական վերլուծության նպատակով (բառակազմական, քերականական, ուղղագրական).
- 3) Թելադրվող նյութի բովանդակության իմաստավորում՝ վերլուծություն-համադրություն.
- 4) Տարբեր միջոցներով անհրաժեշտ ուղղագրական կանոնների վերհիշում, կրկնություն.
- 5) Թելադրության գրում.
- 6) Երկրորդ ընթերցում (ստուգման նպատակով).
- 7) Ինքնաստուգում.
- 8) Գրավորների հանձնում; [3]

2. Նախազգուշական թելադրություն

Նախազգուշական թելադրություններ գրելուց առաջ ուղղագրական մեկնաբանությունները կատարվում են մինչ թելադրություն գրելը: Այս թելադրության տեսակը կիրառելի է տարրական բոլոր դասարաններում, սակայն յուրաքանչյուր առանձին դեպքում այն որոշակի նպատակ է հետապնդում:

Այս թելադրության նպատակն ու կազմակերպման մեթոդական առանձնահատկությունը սխալների կանխումն է, որն իրականացվում է բնագրի շուրջ իրականացվող ուսուցողական-բացատրական աշխատանքի միջոցով: Այս թելադրությունը գրելուց առաջ մենք նախապես որոշում ենք այն բնագիրը (կամ այն որոշվում է դպրոցի մեթոդ միավորման կողմից), որը պիտի երեխաները գրեն: Բնագիրն ուսումնասիրելուց և աշխատանքի ընթացքը պլանավորելուց հետո մշակում ենք հարցաշար, որի միջոցով աշակերտների ուղղագրական գիտելիքները պիտի կրկնենք և ամրակայենք:

Պլանավորված հարցերի օգնությամբ աշակերտները վերհիշում, իմաստավորում և վերարտադրում են թեմայի վերաբերյալ այս կամ այն ուղղագրական կանոնն ու սահմանումը: Մենք ձգտում ենք պատրաստի գիտելիքներ «չմատուցել»: Բառային աշխատանքից հետո, աշակերտները գրատախտակին գրում են թելադրվող նյութի այն բառերն ու բառակապակցությունները, որոնք կարող են դժվարություն ներկայացնել աշակերտների համար: Այս բառերն ամբողջ դասարանը կարդում և ուսումնասիրում է, ներկայացնում է ինքնուրույն դատողություններ:

Այս տիպի թելադրությունը մեթոդիստների մի մասն անվանում են բացատրական կամ մեկնողական թելադրություն, քանի որ դրա ժամանակ նյութը նախ կարդում են լուռ, ապա մի քննի աշակերտ կարդում է բարձրաձայն, որից հետո իրականացվում է բացատրական աշխատանք, կատարվում են մեկնաբանություններ: Թելադրությունն սկսում են գրել միայն այն ժամանակ, երբ նյութը անհրաժեշտ չափով յուրացված է: Բացատրական աշխատանքից հետո գրատախտակը վարագույրով ծածկվում է, երբեմն գրելիս ուսուցիչը հիշեցնում է որոշ կանոններ:

Նախազգուշական թելադրության իրականացման մեթոդական շղթան.

- 1) Թելադրվող նյութի լուռ ընթերցում գրատախտակից,
- 2) Բարձրաձայն ընթերցանություն աշակերտներից մի քանիսի կողմից,

- 3) Նյութի բովանդակության և իմաստի մեկնաբանում հարց ու պատասխանի միջոցով,
- 4) Անհրաժեշտ բառերի ուղղագրական կանոնների կրկնություն, ըմբռնում,
- 5) Բացատրական անհրաժեշտ մեկնաբանություններ ուսուցչի կողմից
- 6) Թելադրվող նյութի առաջին ընթերցում ուսուցչի կողմից (գրատախտակը ծածկված է)
- 7) Նյութի թելադրում ուսուցչի կողմից
- 8) Ինքնաստուգում
- 9) Ստուգում՝ գրատախտակին գրվածի հետ համեմատելով

Նախագուշակյան թելադրության համար գրավոր աշխատանքների[2] գործող ձեռնարկներում առաջադրված բնագրերի բառաքանակի պահպանումը պարտադիր չէ: Բառաքանակի որոշման հարցում ուսուցիչն ազատ է, չնայած առաջնահերթ են տվյալ դասարանի ծրագրային պահանջները: Անհրաժեշտ է պարզապես հաշվի առնել դասարանի մակարդակը, աշխատանքի համար նախատեսված ժամանակը և թելադրություն գրելու ուսումնական նպատակները:

Նախագուշակյան է համարվում նաև այն թելադրությունը, որի ժամանակ աշակերտները նախապես զգուշացվում են, որ հաջորդ օրը (մոտակա օրերին) պիտի թելադրությամբ գրեն որոշակի բնագիր: Այս թելադրությունը գրելուց առաջ բնագրի պատճենահանված տարբերակը բաժանվում է աշակերտներին: Բնագիր կարելի է ընտրել նաև դասագրքի նյութերից: Հանձնարարվում է տանը նախապատրաստվել թելադրություն գրելուն՝ նախապես աշխատանք իրականացնել, որ նախապատրաստությունը լինի գիտակցված: Այս նպատակով դասարանում նախապես քննարկվում է բնագիրը: Ուսուցիչը նախագուշացնում է, որ ուշադիր նայեն և հիշողության մեջ ամուր պահեն ուղղագրական արժեք ներկայացնող բառերի ճիշտ գրությունը, քանի որ թելադրվելիք բնագրում այդ բառերն ընդգրկված են (օրինակ՝ երեկո, երեկոյան, Էդիկ, եղբայր, երջանիկ, Էմմա, երեկույթ, Էլույթ, երգ): Հաջորդ օրը՝ դասի ժամանակ, գրատախտակին աշակերտները գրում են ուղղագրական արժեք ներկայացնող բառերը: Դուրս գրված բառերը առաջարկվում է գործածել նախադասությունների մեջ. նախ՝ բանավոր, ապա՝ գրավոր: Նմանատիպ վարժություններից հետո, երբ ուսուցիչը համոզվում է, որ ուսուցման ենթակա ուղղագրական կանոնները աշակերտների կողմից արդեն յուրացվել են, կարող է

սկսել թելադրելը: Անհրաժեշտ է ուշադիր լինել, որ աշակերտները բնագիրը անգիր չսովորեն, քանի որ այդ դեպքում թելադրություն գրելիս նրանք կառաջնորդվեն մեխանիկական հիշողությամբ: Այս դեպքում թելադրությունը կդառնա բացարձակապես անարդյունավետ աշխատանք:

Ուսուցողական թելադրության այս, ինչպես և մյուս ձևերը նպատակ ունեն կանխելու աշակերտների ուղղագրական սխալները և զարգացնելու նրանց գրագետ գրելու ունակությունները: Այդ պատճառով էլ մենք պատեհ առիթը միշտ օգտագործում ենք, որպեսզի աշակերտները ուղղագրական արժեք ներկայացնող բառերը շատ տեսնեն, շատ կրկնեն, նրանցով կազմված նախադասություններով վարժություններ կատարեն: Թելադրելու ընթացքում ևս մենք չենք դադարեցնում ուսուցողական աշխատանքը. մշտապես աշակերտներին ուղղում ենք, ուղղորդում, մշտապես կրկնել տալիս այս կամ այն ուղղագրական և կետադրական կանոնները: Նախագգուշական թելադրությունը մենք կիրառում ենք ուղղագրական բոլոր տիպի սխալների շտկման նպատակով, բայց առավելապես՝ ավանդական քերականական սխալների դեպքում:

Այս գործընթացում կարևորվում է թելադրության բնագրերի ընտրությունը:

3. Ինքնաթելադրություն

Ինքնաթելադրություն գրելու կարողության ձևավորումը հիմնականում սկսվում է երկրորդ դասարանից: Թելադրության այս տեսակի միջոցով կարելի է պայքարել **հնչյունային, ավանդական, քերականական և մասամբ էլ՝ բարբառային** սխալների դեմ: Այս թելադրությունը ինքնաթելադրություն է կոչվում նրա համար, որ ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է դասարանում նախօրոք արդեն մշակված գեղեցիկ հատվածները կամ ոտանավորները սովորել անգիր և իրենք իրեց թելադրելով գրել:

Ինքնաթելադրությունը նախագգուշական թելադրության մի տարբերակ է, որը աշակերտը գրում է ոչ թե ուսուցչի, այլ ի՛ր թելադրությամբ: Այն զարգացնում է աշակերտների ուշադրությունը, կամքը, հիշողությունը, սովորեցնում է կառավարել սեփական մտքերը, գործողությունները: Աշակերտները ձեռք են բերում հետևողականորեն աշխատելու ունակություն:


Ինքնաթելադրության նյութերը մենք ընտրվում ենք ինչպես երաշխավորված թելադրության ժողովածուներից, այնպես էլ մայրենիի դասագրքից; Դրանք

երեխաները անգիր են սովորում տանը, գրում՝ դասարանում: Նախքան դասարանում ինքնաթելադրություն գրելը նախապատրաստական աշխատանքը կատարվում է տանը: Աշակերտը հանձնարաված տեքստը նախ սովորում է անգիր, հետո գրում է առանձին թղթի վրա՝ առանց տեքստին նայելու: Ապա համեմատում է տեքստի հետ ուղղում թույլ տված սխալները: Այս աշխատանքը տանը կամ դպրոցում իրականացվում է մի քանի անգամ, մինչև երեխան կարողանա անգիրը, առանց որևէ սխալի, ինքնուրույն վերարտադրել: Երեխաներին պետք է նախապես սովորեցնել ինքնաթելադրություն գրելու կանոնները:

Այդ ուղղությամբ աշխատանքներ ենք կազմակերպում նախ դասարանում: Դասարանում նախապատրաստվող և անցկացվող ինքնաթելադրության մեթոդական շղթան.

1. Նյութի ընթերցում գրատախտակից կամ դասագրքից (նախ՝ ուսուցիչը, ապա աշակերտը)
2. Բնադրում առկա ուղղագրական, իմաստային բացատրություններ, կետադրության մեկնաբանում:
3. Նյութի անգիր ուսուցում:
4. Ինքնաթելադրություն (գրատախտակը ծածկված է):
5. Ինքնաստուգում:
6. Ստուգում՝ գրատախտակին գրվածի հետ համեմատելով:
7. Գրավորների հանձնում:

Ստեղծագործական թելադրությունները բազմազան են, սակայն դրանք կարելի է համակարգել 4 խմբի մեջ՝



Թելադրության այս բոլոր տեսակներն էլ ուսուցչին և աշակերտներին մղում են լեզվառճական և տրամաբանական ինքնուրույն աշխատանքների, որոնք կատարվում են թելադրությանը զուգընթաց: Գրավորի այս տեսակը նախատեսված է կիրառել 2-4-րդ [3] դասարաններում: Ստեղծագործական թելադրությունները տարրական դպրոցում կիրառելիս հաճախ այնքան են ձևափոխվում, որ ավելի շատ փոխադրության են նմանվում, որի պատճառով էլ հաճախ գրավորի այս տեսակը մեթոդիստները անվանում են **հորինողական**:

Դիտարկենք այս տեսակներն առանձին-առանձին:

1.2 Տարրական դպրոցում կիրառվող թելադրության տեսակների դասակարգումը և ընդհանուր բնութագիրը

1. *Ընտրովի թելադրությունները* կիրառվում են հիմնականում 2-3-րդ դասարաններում, երբ աշակերտներն արդեն տիրապետում են սովորական թելադրություններ գրելու կարողություններին: Այս թելադրությունները նպաստում են սովորողների ուշադրության կենտրոնացմանը, հիշողության զարգացմանը, համադրելու, հակադրելու, ընդհանրացնելու կարողությունների ձևավորմանը: Ստեղծագործական թելադրությունը նպաստում է սովորողների ավելի բարդ բնույթի ստեղծագործական գրավորներ գրելուն: Այն ինքնուրույն շարադրության նախադրումն է և առավելապես խարսխվում է ընտրովի կարգալու կարողության հիման վրա:

Ընտրովի թելադրության նյութ կարող են ծառայել սովորական թելադրության բնագրերը՝ ըստ, որոշակի առաջադրանքների: Ընտրովի թելադրությունը տարրական դասարաններում գործածության լայն շրջանակներ ունի: Օրինակ, թելադրության այս տեսակի միջոցով կարելի է ամրապնդել և հարստացնել աշակերտների և ուղղագրական, և քերականական գիտելիքները, դրանք վերածել ուղղագրական հմտությունների:

Թելադրության բնագրին կից տրվող առաջադրանքները կարող են լինել օրինակ՝ *թելադրված նյութից գրի առնել միայն գոյական անունները, որևէ ուղղագրական կանոնին վերաբերող բառեր, եզակի թվով գործածված բառեր (կամ դրանք դարձնել հոգնակի), ածականները, հատուկ անունները* և այլն: Ընտրովի թելադրության բնագիրը գրավորների մյուս տեսակների համեմատությամբ սովորաբար պետք է ծավալուն չլինի և ցանկացած քերականական նյութով կամ ուղղագրական կանոններով ոչ հագեցած:

Որպեսզի երեխաները ոչ միայն մինչև գրելն ըմբռնեն առաջադրանքի էությունը, այլև գրելու ընթացքում մեկ անգամ ևս կարդան տրված առաջադրանքը, մենք թելադրության նյութն անպայման գրում ենք գրատախտակին:

Մեր պրակտիկայով համոզվել ենք, որ միևնույն թելադրության ժամանակ շահեկան է ընտրել և հանձնարարել լեզվական կամ տրամաբանական մեկ ուղղություն՝ աշակերտներին չշփոթեցնելու նպատակով: Նյութն անհրաժեշտ է

թելադրել դանդաղ, արտահայտիչ: Ընտրովի թելադրություն կարելի է իրականացնել 2-րդ դասարանից (առանձին դեպքերում մասնակի չափով նաև 1-ին դասարանից):

Ընտրովի թելադրության անցկացման մեթոդական շղթան.

1. Առաջադրանքի գրում գրատախտակին, բացատրություն,
2. Համապատասխան կանոնի կամ սահմանման կրկնություն և ամրակայում.
3. Առաջին ընթերցանություն ուսուցչի կողմից՝ ամբողջական ունկնդրման համար.
4. Երկրորդ ընթերցում՝ ընտրովի հատվածների մեկնաբանմամբ.
5. Թելադրություն.
6. Երկրորդ ընթերցում գրվածը ստուգելու համար (երեխաների ուշադրությունը հրավիրել առաջադրանքի վրա).
7. Ինքնաստուգում.
8. Գրավորների հանձնում:

2. **Ազատ թելադրությունը** կազմակերպական որոշ հատկանիշներով նման է փոխադրությանը: Հետևաբար այն ոչ միայն ձևավորում է ունկնդրածը գրագետ գրի առնելու երեխաների կարողությունը, այլևս զարգացնում է ինքնուրույնաբար կապակցված խոսք շարադրելու և գրի առնելու ունակություն: Այն բարդ է, հետևաբար ուսուցչից պահանջում է առավել բժախնդիր աշխատանք:

Նախքան բնագրի ընտրությունը, որը կարող է լինել ինչպես մայրենիի դասագրքերից, այնպես էլ թելադրության ժողովածուներից, ուսուցիչը որոշում է թելադրության նպատակը: Թելադրության բնագիրը պետք է ունենա ոչ թե նկարագրական բնույթ, այլ պիտի պարունակի դեպքեր, ունենա հերոսներ և լինի ծավալուն: Սակայն դիպաշարը երեխաների համար պիտի ըմբռնելի լինի:

Ազատ թելադրությունը ոչ թե բառերի, այլ մտքերի թելադրություն է: Թելադրության ժամանակ բնագիրը պիտի ընթերցել մասերով: Աշակերտներին հանձնարարվում է ընթերցման ընթացքում գրի առնում բնագրի մտքերը «իրենց բառերով»: Այսպիսով, փաստորեն, աշակերտներին ուսուցիչը նախապատրաստում է փոխադրություն գրելուն:

Ազատ թելադրության իրականացման մեթոդական շղթան.

1. Կազմակերպչական բացատրություններ (ուշադիր լսել, որոշել էականը և երկրորդականը, մտապահել հենակետային բառերը, դեպքերի հաջորդականությունը...);
2. Նյութի առաջին ընթերցում՝ ամրապնդման ունկնդրման համար .
3. Նյութի երկրորդ ընթերցում որոշակի նպատակներով, գրության տեսակետից դժվարություն ներկայացնող բառերի գրում գրատախտակին, դրանց բացատրություն .
4. Տրամաբանական ամբողջություն ունեցող առանձին մասերի ընթերցում, վերլուծություն, վերարտադրություն և գրառում .
5. Երրորդ ընթերցում՝ ստուգման համար .
6. Ինքնաստուգում .
7. Գրավորների հանձնում:

3. **Հորինողական թելադրությունները** ինչ-որ ձևով նման են «ազատ» թելադրություններին: Դրանք տարաբնույթ են և կարելի է իրականացնել ինչպես տրված թեմայով հենակետային բառերի հիման վրա տեքստը կազմելու, այնպես էլ առանձին «մտքերի թելադրման», ազատ թելադրության ուղիներով:

Հորինողական թելադրությանը պետք է մանրակրկիտ պատրաստվել ոչ միայն թելադրություն գրելու նախօրեին, այլև դասերի համալիրի միջոցով:

Հորինողական թելադրություն գրելու ժամանակ ուղղագրությունն ունի օժանդակ գործառույթ. էականն ինքնուրույն վերարտադրությունն է և ինքնաթելադրելու կարողության ձևավորումը: Այս թելադրության վերջնարդյունքը ունկնդրված բնագրի առաջադրված հենակետային բառերով տեքստի ստեղծումն է և, իհարկե, ինքնաթելադրությամբ նյութը գրելու կարողության ձևավորումը: Գրավորների այս տեսակը 2-3-րդ դասարաններում է հիմնականում իրականացվում, քանի որ այս դասարաններում են աշակերտներն աստիճանաբար ձեռք բերում փոփոխություններով պատմել: Այն կարող է համարվել հենակետային բառերով գրվող խմբային փոխադրության և թելադրության տարբերի լիագումար:

Հորինողական թելադրությունը կարելի է գրել և՛ նախադասություն առ նախադասություն, և՛ պարբերություն առ պարբերություն, և՛ ամբողջական տեքստով: Բոլոր դեպքերում էլ աշխատանքն իրականացվում է աշակերտների միջոցով.

հենակետային բառերի իմաստների և ուղղագրության շուրջ բացատրություններից հետո աշակերտները դրանցով մտքով իրար հետ կապված նախադասություններ են կազմում: Դրանց քննարկման արդյունքում ընտրվում են երեխաների կազմած լավագույն նախադասությունները, դասավորվում տրամաբանական շարունակությամբ, ամբողջացվում, շտկվում: Ի վերջո նյութը մեկ-երկու աշակերտ պատմում են ամբողջությամբ: Փաստորեն արդյունքում ստացվում է համադասարանային աշխատանքի միջոցով ձևավորված պատմություն, որը գրի է առնվում գրատախտակին, ապա ուսուցիչը տեքստը թելադրում է:

Մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում կարևորում ենք բոլոր աշակերտների մասնակցությունը պատմության ստեղծման աշխատանքներին: Այսպիսի թելադրությանը մենք նախապատրաստում ենք՝ պարզելով, թե ինչպես պետք է գրվի այն, առանձնացվեն հենակետային բառերը, աշխատանք իրականացվի դրանցով նախադասություններ, առանձին մտքեր կամ ամբողջական տեքստը կազմելու ուղղությամբ:

Սովորաբար բնագրից ընտրված հենակետային բառերը գրվում են չհոլովված, չխոնարհված ձևերով:

Թելադրության այս տեսակը գրելու համար պետք է ընտրել այնպիսի բնագիր, որը համեմատաբար փոքրածավալ է և հնարավորություն է տալիս հնարավորինս շատ հենակետային բառեր ընտրել:

Հորինողական թելադրության իրականացման մեթոդական շղթան.

1. Հենակետային բառերի ընտրություն և գրառում գրատախտակին:
2. Ընթերցում (ուսուցչի կամ աշակերտի կողմից).
3. Բնագրում ընդգրկված բառերի ուղղագրական և իմաստային բացատրություններ, անհրաժեշտ կանոնների կրկնություն.
4. Նախադասությունների կազմում, կանոնավորում, հղկում.
5. Ընթերցում՝ երեխաների կողմից գրածը ստուգելու համար.
6. Ինքնաստուգում,
7. Գրավորների հանձնում:

4. Առարկայական թելադրության ժամանակ ցուցադրվում են նախօրոք ընտրված առարկաները կամ դրանց նկարները, իսկ աշակերտները պիտի լուռ գրեն համապատասխան անունները: Հիմնականում նման թելադրություն գրում են 1-ին

դասարանում՝ սովորեցնելու համար ինչպես անձանոթ առարկաների անունները, այնպես էլ ինքնաթելադրություն գրելու գործընթացին նախապատրաստելու համար:

2-4-րդ դասարաններում թելադրության այս տեսակը գրելիս աշակերտներին աստիճանաբար կարելի է տալ լրացուցիչ հանձնարարություններ: Օրինակ՝ ցուցադրել ասենք, **մկրատ, դրոշակ և այլն, տալով առաջադրանք.**

1. Առարկայի անունը գրել վանկատված:

2. Գրել առարկայի անունը համապատասխան հատկանիշ ցույց տվող բառերի հետ:

3. Գրել առարկայի անունը՝ փոխելով թիվը:

4. Գրել առարկայի անունը դարձնելով հոգնակի:

Այս թելադրությունների հիմնական նպատակն է աշակերտների հիշողության մեջ ամրակայել տրված բառի արտասանության և գրության ճիշտ ձևը, սովորեցնել անցած քերականական և ուղղգրական կանոնները, ճշգրտորեն կատարել առաջադրանքների պահանջները: Աշխատանքները հնարավորություն կտան աշակերտներին ինքնուրույն աշխատել սովորել՝ հիմնվելով անցածի, սովորածի վրա:

1.3 Թելադրությունը որպես կրտսեր դպրոցականի ուղղագրական կարողության ձևավորման միջոց

Անառարկելի է որ կարդալն ու գրելը մարդու կրթության և ընդհանուր զարգացման համար հենքային ունակություններն են: Դրանց վրա է գործնականորեն կառուցվում նրա հետագա ողջ ուսումնական գործունեությունը: Դպրոցում ունեցած երեխայի ուսումնական հաջողությունները պայմանավորված են մասնավորապես նրա՝ կարդալու և գրելու կարողությունների մակարդակով (հասկանալով, գիտակցաբար և այլն): Գրավոր խոսքի զարգացման գործընթացը հոգեբանական և ֆիզիոլոգիական տեսակետից բավականին բարդ է: Գրավոր խոսքի բնույթը էականորեն տարբերվում է բանավոր խոսքից ինչպես գործառնության, այնպես էլ ներքին կառուցվածքային իմաստներով: Գրավոր խոսքը բանավորի՝ կետադրական նշաններով պարզ վերարտադրություն չէ: Այն ձևավորվում է միայն նպատակաուղղված ուսուցման ճանապարհով: Ըստ էության՝ գրավորի բոլոր տեսակներն էլ վարժություններ են, որոնք սովորաբար ուսուցողական բնույթ ունեն: Գրավոր աշխատանքները պիտի կրեն զուտ մարզողական բնույթ: [3, էջ 287-288]: Մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում համոզվել ենք, որ ուղղագրական հմտությունների մշակումը բավականին բարդ է և ժամանակատար: Դրանք ձևավորվում են բազմակի, միօրինակ կրկնության հիման վրա:

Ուսումնասիրությունները և մեր մանկավարժական պրակտիկան ցույց է տվել, որ եթե աշակերտն ունի զարգացած հնչյունային լսողություն, ճիշտ է արտաբերում լեզվի հնչյունները, տարբերում է դրանք, եթե ունի հնչյունների վերարտադրման որոշակի մակարդակի հասած կարողություն, նրա համար հեշտ է լինում ուղղագրության գործընթացում ծագած դժվարությունների հաղթահարումը: Պատահական չէ, որ մայրենիի ծրագրում մեծ տեղ է տրվում երեխաների հնչյունային լսողության զարգացմանը, վերլուծական-համադրական մտածողության ձևավորմանը :

Երեխաների ուղղագրական կարողության ձևավորման գործընթացը կազմակերպելիս մենք հաշվի ենք առնում, որ նրանք բառն արտասանում են ամբողջությամբ, սակայն գրում են՝ մաս-մաս արտասանելով և համադրելով:

Ավտոմատացված և չգիտակցված գործընթացներն արդյունավետ չեն, քանի որ ուղղագրական հմտությունների ձևավորման նպատակով բառերի առանձին խմբերի բազմիցս գրելը չի տալիս ցանկալի արդյունք. երեխաները շարունակում են կատարել սխալներ:

Մենք մեր ուսուցչական փորձով համոզվել ենք, որ սովորողների կողմից գիտելիքի ձեռքբերման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ և առաջ երեխան պետք է սովորի առարկաները, երևույթները վերլուծել, համադրել, գտնել նմանությունները և տարբերությունները, նկատի օրինաչափություններ [3, էջ 304-305]: Այս կարողությունները սովորողներին պետք են գալիս ուսումնական գործունեության բոլոր ձևերում:

Մեր մանկավարժական երկար տարիների փորձը ցույց է տվել, որ քերականական կանոնների իմացությունն, անշուշտ, կարևոր է գրագետ գրելու գործընթացում, սակայն երեխաներն իրենք պետք է ձևակերպեն դրանք՝ բխեցնելով լեզվական վարժությունների միջով անցած ուղուց: Հակառակ դեպքում՝ գիտելիքը կմնա գիտելիքի մակարդակում, այն չի դառնա կարողություն: Մենք բազմիցս նկատել ենք, որ երեխան վարժ, առանց շփոթվելու ասում է ուղղագրական կանոնը, սակայն թույլ է տալիս այդ իսկ կանոնին վերաբերող սխալներ:

Թեև հայերենի ուղղագրության յուրացումը տարրական դասարաններում չի իրականացվում որպես մայրենի ծրագրի առանձին բաժին, սակայն առանց ուղղագրական տարրական գիտելիքների յուրացման և ամրակայման, հմտությունների վերածման՝ մայրենիի դասը հնարավոր չէ պատկերացնել [3 էջ 304]

Մեր տարիների փորձով համազվել ենք, որ տարաբնույթ վարժությունների գիտակցական կատարման ճանապարհով միայն կարելի է ձևավորել կրտսեր դպրոցականների ուղղագրական հմտությունները:

Ըստ տարրական դպրոցի մայրենիի ծրագրի՝ հայերենի ուղղագրության մեջ են մտնում.[15]

- 1) ձայնավորների և բաղաձայների ուղղագրությունը,
- 2) երկհնչյունների ուղղագրությունը,
- 3) քերականական ուղղագրությունը:

Դիտարկենք II դասարանում ուղղագրությունից ուսումնասիրվող թեմաները :

1. Հնչյունաբանություն

- հնչյուն և տառ հասկացություններ,
- ձայնավոր և բաղաձայն հնչյուններ,
- օ(ո), է(ե) ձայնավորների և և-ի ուղղագրություն,
- վանկի, միավանկ և բազմավանկ բառերի տողադարձի, տողադարձի ժամանակ գաղտնավանկի գրության կիրառման կարողությունների:

2. Բառ և բառիմաստ:

3. Բառակազմություն

- բառի բաղադրիչները (արմատ, ածանց) ճանաչելու և անսխալ գրելու,
- բառերի տեսակներն ըստ կազմության տարբերակելու և ճիշտ գրելու,
- բառիմաստի ընկալման և բառապաշարի հարստացման նպատակով՝ բառակազմական գիտելիքներն օգտագործելու կարողությունները,
- ջ-ջ, ձ-ց, դ-խ բաղաձայների ճիշտ արտասանության և գրության կարողությունները:

4. Նախադասություն .նպատակները՝

- բառ, բառակապակցություն, նախադասությունը տարբերակելու, նախադասություն կազմելու,
- նախադասության գրավոր անդամները տարբերակելու և դրանց տրվող հարցերի իմացությունը կիրառելու,
- մտքի արտահայտման տեսանկյունից գլխավոր և երկրորդական անդամները տարանջատելու,
- համառոտ և ընդարձակ նախադասությունները տարբերակելու,
- օժանդակ բայը ճիշտ գրելու կարողություններ,
- «նախադասություն» թեմայում ստուգվում են նաև մ-ն, ր-ռ, վ-ֆ և անցած բաղաձայների ճիշտ արտասանության և գրության կարողությունները.[7]

Գլուխ. 2 Կրտսեր դպրոցականների ուղղագրական կարողությունների ձևավորումն ու նրանց ներկայացվող պահանջները

2.1 Ուղղագրության ուսումնասիրման մեթոդները տարրական դպրոցում . ընդհանուր բնութագիր

Տարրական դասարանների մայրենիի ուսուցման մեթոդիկայում երաշխավորում է ուղղագրության ուսուցման մի քանի մեթոդ:[10]

- 1) **Ընդօրինական մեթոդ**
- 2) **Հնչյունային մեթոդ**
- 3) **Կանոնարկման մեթոդ**

Անկախ նրանից ,թե որ մեթոդն է ընտրվում ուղղագրության ուսումնասիրման համար՝ պիտի առաջնորդվել ուսուցման՝ **պարզից բարդը, ծանոթից անծանոթը** գնացող սկզբունքով: Ուղղագրական կարողության ձևավորման ու զարգացման գործընթացում ուսուցումն իրականացվում է իմացածի վրա նորի կառուցմամբ,այսինքն՝ **պարուրածն սկզբունքով**. անրադարձ անցածին[3]

1) **Ընդօրինական մեթոդի** հիմքը ճիշտ գրված բառերի ընդօրինակումն է կամ պարզապես նույն նյութի բազմակի արտագրությունը:

2) **Հնչյունային մեթոդի** օգնությամբ զարգասնում է երեխաների զարգացվում է հնչյունային լսողությունը: Երեխաները սովորում են հստակ տարրալուծել բառն ըստ հնչյունների: Նրանք սովորում են որոշել բառում յուրաքանչյուր հնչյունի տեղը, դրանք համադրում են, ապա՝ բառը գրում ամբողջությամբ: Այսպես ասած՝ բառը «քանդում», ապա «կառուցում» են: Ըստ այս մեթոդի կողմնակիցների՝ ուղղագրական կարողության ձևավորման և զարգացման ամենաարդյունավետ հնարը թելադրություն գրելն է:

3) **Կանոնարկման մեթոդի** կողմնակիցները գտնում են, որ բառերի ուղղագրության մեկ ընդհանուր կանոնի ուսումնասիրումն ու կիրառումը ճիշտ գրել սովորեցնելու ամենաարդյունավետ ճանապարհն է: Այս երեք մեթոդներն էլ կիրառվում են տարրական դպրոցում: Զարգացնող են մասնավորապես հնչյունային և կանոնարկման մեթոդները: Պարզապես ճիշտ կերպով պետք է որոշել դրանց

կիրառման հաջորդականությունը: Մենք մեր մանկավարժական փորձով համոզվել ենք, որ չգիտակցված, պասիվ ուղղագրական կարողությունների սերտումը թելադրություն գրելու գործընթացում մեխանիկական և անարդյունավետ գործունեություն է. ուղղագրության ուսուցումն չպետք է սկսել ուղղագրական արժեք ներկայացնող բառերը երեխաներին պարզապես արտագրել տալուց: Երբ հատուկ աշխատանք է տարվում (գրաճանաչության շրջանից սկսած) աշակերտների հնչյունային լսողության զարգացման ուղղությամբ, ձևավորվում և զարգանում են նրանց վերլուծական-համադրական ունակությունները:

Տարրական դպրոցում աստիճանաբար երեխաներն սկսում են ուսումնասիրել լեզվական տարրական իրողությունները. ձևակերպում են պարզ սահմանումներ, կանոնակարգում են իրենց իմացածը: Սա արդեն **կանոնարկման մեթոդի կիրառումն** է: Այս մեթոդների հետ համատեղ հաճախ՝ հանդես է գալիս ճիշտ գրված բառերի ընդօրինակումը: Մենք նկատել ենք, որ այն մեխանիկական չի լինի, եթե զուգորդվի ստեղծագործական տարրեր պարունակող առաջադրանքներով: Օրինակ՝ *Արտագրի՛ր՝ լրացնելով, ..., Արտագրի՛ր՝ համակարգելով: ..., Բնագրից դուրս բեր: ...* և այլն:

Աշակերտների ինքնուրույն մտածողության խթան կարող է հանդիսանալ նաև սահմանման, կանոնի արտահայտած իմաստի հասկացումն ու յուրացումը լեզվական վարժությունների կատարման ճանապարհով: Այս ամենը նպաստում է, որ աշակերտները կանոնը ձևակերպեն վարժություններից քաղած փաստերի հիման վրա: Այսպիսի աշխատանքն իրականացվում է համադասարանային մակարդակով՝ դասագրքի վարժություններով կամ անհատական քարտերով [304]:

Եթե ուսուցիչը նպատակադրվել է թելադրությամբ պայքարել ավանդական տիպի սխալների դեմ, հասկանալի է, թելադրության տեքստը պետք է հազեցած լինի ավանդական սխալների տեղիք տրվող բառերով: Օրինակ՝ **օձ, դեղձ, հորդ, փորձ, վարդ, զարդ, առաջնորդ, ընդունել** և այլն: Իսկ եթե որոշել է պայքարել քերականական տիպի սխալների դեմ, ապա թելադրության տեքստը հարուստ պետք է լինի քերական տիպի սխալների տեղիք տվող բառերով: Օրինակ՝ **դերանուններ, ածականներ, բառակազմություն, բայեր** և այլն: Հնչյունային տիպի սխալները կանխելու համար տարրական դպրոցի ցածր դասարաններում (I-II) թելադրությունից առաջ

նպատակահարմար ենք գտնում ամբողջ տեքստի բառերը ենթարկել (բանավոր) վանկային և հնչյունային վերլուծության:

Ցանկացած թելադրության ժամանակ մենք ուշադրություն ենք դարձնում բառերը (բանավոր և գրավոր) հաճախակի տարալուծելու, արտասանելու և վերլուծելու կարողությունների ձևավորումը: Այս աշխատանքները սովորողների ուղղագրական սխալները կանխելու լավագույն միջոց են: Դրանք աշակերտներին վարժեցնում են աշակերտներին բառերի ճիշտ լսատեսողական պատկերին, դրանով իսկ կանխելով հնչյունային սխալները:

Մենք նպատակ ունենք կանխելու աշակերտների սխալները և զարգացնելու նրանց՝ ճիշտ գրելու ունակությունները: Այդ պատճառով մենք պատեհ առիթը միշտ օգտագործում ենք, որպեսզի աշակերտները սխալների տեղիք տվող բառերը շատ տեսնեն, շատ կրկնեն ու նրանցով կազմված նախադասություններով վարժություններ կատարեն: Թելադրելու ընթացքում ևս մենք չենք դադարեցնում ուսուցողական աշխատանքը. մենք մոտենում ենք աշակերտներին, սխալները նկատելու դեպքում նրանց միջոցով պարզաբանումներ կատարում և այդպիսով կանխում ենք սխալները:

Հնչյունային, ավանդական, քերականական և մասամբ էլ՝ բարբառային սխալների դեմ մենք պայքարում ենք նաև ինքինաթելադրությամբ: Ցանկացած թելադրության ժամանակ պարզաբանվում ենք անձանոթ և ուղղագրական տեսակետից դժվարություն հարուցող բառերը, ապա ինքնուրույն կամ ընդհանուր ուժերով դրանց ուղղագրության մասին հակիրճ բացատրություն ենք տալիս: Կարելի է ոչ միայն հնչեցնել, այլև գրատախտակին գրել ուղղագրական բարդություն ունեցող բառերն ու բառակապակցությունները: Մենք հիմնականում հետամուտ ենք լինում ստուգելու աշակերտների ձեռք բերած ուղղագրական ունակության աստիճանը, այլ կերպ ասած՝ ուզում ենք պարզել, թե նախորդ դասերին (նաև տարիներին) սովորեցրած ուղղագրական կանոնները, որոնք սիստեմատիկաբար ամրապնդվել են վարժությունների և զանազան ուսուցողական գրավորների միջոցով, ինչ չափով ու կայունությամբ են յուրացրել աշակերտները:

2.2 Կրտսեր դպրոցականների թույլ տված ուղղագրական սխալները և նրանց կանխման մեթոդիկան

Հայտնի է, որ տարբեր ժամանակներում տարրական դպրոցում ուսումնասիրվող ուղղագրական կարողություններին ներկայացվող պահանջները տարբեր են եղել, սակայն ուղղագրության յուրացումը՝ որպես պահանջ, միշտ էլ իր որոշակի տեղն ու դերն է ունեցել մայրենի լեզվի ուսուցման ընդհանուր համակարգում:

Մեր մանկավարժական պրակտիկայում և իրականացված ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ ուղղագրության յուրացուման արդյունավետ եղանակներն են՝ աշակերտների կատարած ուղղագրական սխալների ճիշտ և խելացի դասակարգումը և դրանք կանխելու համար կազմակերպվող նպատակային ու հետևողական աշխատանքը:

Ուսումնասիրությունները և մեր պրակտիկան ցույց է տվել, որ կրտսեր դպրոցականի գրավոր աշխատանքներում հանդիպում են տարբեր տիպի, հաճախ՝ նաև անսպասելի սխալներ: Մենք դրանք խմբավորել ենք չորս տեսակի մեջ (Տե՛ս գծապատկեր 3.1).

Գծապատկեր 3.1



Կրտսեր դպրոցականների հայերենի ուղղագրության ուսումնասիրման և նրանց ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացում մենք կարևորում ենք մասնավորապես գրավոր խոսքում սովորողների սխալները կանխելու աշխատանքները: Այս տեսակետից՝ մենք նպատակահարմար ենք գտնում ուղղագրական կարողությունների տարբերակված կամ անհատական ձևավորումը: Այն հենվում է աշակերտների լեզվական ունակությունների վրա՝ հաշվի առնելով նրաց թույլ տված սխալներն ու դրանց հաղթահարման պայմանները:

Մեր մանկավարժական տարիների փորձով համոզվել ենք, որ տարրական դպրոցում ուղղագրական կարողությունների ձևավորման արդյունավետ հնարներից մեկը մայրենիի դասերին ուղղագրական արժեք ներկայացնող բառի կազմության ուսումնասիրումն է: Բառի կազմության ուսումնասիրման ունակությունը երեխաները ձեռք են բերում դեռևս կարդալու տարրական կարողության ձևավորման փուլում՝ բնագրի շուրջ աշխատելիս; Մասնավորապես բառային աշխատանքի փուլում սովորողներն իրենց անձանոթ բառերի իմաստը բացատրում են բառակազմական վերլուծության ճանապարհով; Հենց այս փուլում էլ բառի բաղադրիչների իմաստի բացատրությունը, ինչպես նաև նախադասության մեջ բառի գործածումը մեծապես նպաստում է աշակերտների ուղղագրական ունակությունների զարգացմանը: Այս ճանապարհով միաժամանակ հարստանում է նրանց բառապաշարը: Այս կապակցությամբ հոգեբան-մանկավարժ Գ. Էդիլյանը գտնում էր. «Ամեն մի տեսակ գրության ժամանակ գրողը պետք է պատկերացնի գրելիք բառի իմաստ-նշանակությունը» [4, էջ 179]

Կրտսեր դպրոցականների համար մատչելի և օգտակար հնար է բառի ուղղագրությունն ստուգելու ժամանակ դրա «թեքումը» տարբեր հոլովներով, ժամանակով և եղանակով: Այս ուղղությամբ վարժությունների կատարման ճանապարհով աշակերտները սովորում են բառի ուղղագրության նկատմամբ կասկածներ ունենալու դեպքում թեքել այն: Օրինակ, **փախչել-փախա, խեղճ-խղճալ** և այլն: Ուղղագրական այս կամ այն կանոնի վերաբերյալ աշակերտների գիտելիքներն ամրապնդելու արդյունավետ հնար է նաև ուղղագրական քարտերի, ուղղագրական բառ-գրքույկի օգտագործումը, որը մենք կիրառում ենք դեռևս երկրորդ դասարանից:

Այսօր արդեն արդյունավետ է խմբային աշխատանքի մեթոդիկայի օգտագործումը, որը նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը,

միջանձնային հարաբերությունների, համագործակցային ունակության ձևավորմանը, ուսուցման գործընթացը հետաքրքիր ու աշխույժ դարձնելուն : Փոխներգործուն մեթոդները, խարսխվելով ուսուցման և դաստիարակության ավանդական մեթոդներին, դրանք դարձնում ավելի ճկուն, ապահովում են ուսուցման գործընթացում սովորողների համագործակցային գործունեության արդյունավետությունը:

Համագործակցային գործունեության ընթացքում իրականացվող համատեղ աշխատանքի արդյունքում երեխաները հայտնաբերում են լեզվի ուղղագրական օրինաչափությունները, դատողություններ են անում, գիտակցում են սեփական մտածողական գործունեության հնարները: Մեր մանկավարժական փորձառությամբ հանգել ենք այն եզրակացության , որ ուղղագրական կարողությունների ձևավորումը թելադրություն գրելու գործընթացում կարելի է կազմակերպել նոր նյութի ուսումնասիրման, գիտելիքների ստուգման (ուսուցողական), ամրակացման և թեմայի ամփոփման դասերին (թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների օգնությամբ):

Այս գործընթացը կազմակերպելիս աշխատում ենք ճիշտ որոշել սովորողներին ցուցաբերվող օգնության ձևն ու չափը:

Հայտնի է, որ միևնույն դասարանում սովորում են տարբեր մակարդակի, կարողությունների և հնարավորությունների տեր երեխաներ: Բնականաբար, ուղղագրական իրողություններն էլ նրանց կողմից յուրացվում են տարբեր ծավալով և տարբեր մակարդակով էլ մտապահվում են: Ուսումնասիրությունները և տարիների փորձը ցույց է տալիս, որ տարբեր ընդունակություններով աշակերտների ընկալումն էլ իր դժվարություններն ունի՝ չնայած այս իրավիճակում առաջադրված խնդիրների քննարկումն ընթանում է ավելի ակտիվ և աշակերտները դատողություններ են անում տարբեր մակարդակներով: Դասարանից դասարան աստիճանաբար խորանում են նրանց գիտելիքները, զարգանում են մտածողական ունակությունները, և կայունանում է հիշողությունը: Այս հիմնավորմամբ էլ՝ մենք ուղղագրական կարողությունների ձևավորման ընթացքում հաշվի ենք առնում յուրաքանչյուր աշակերտի կարողությունները:

Ինչպես նշեցինք նախորդ ենթավերնագրում, հայերենի ուղղագրությունը՝ որպես առանձին ուսումնական խնդիր, մայրենի ծրագրով նախատեսված չէ, (իբրև

տեսական նյութի յուրացում): Ուղղագրական արժեք ներկայացնող մի խումբ բառեր, որոնց աշակերտները հանդիպում են մայրենիի դասի ընթացքում՝ (ինչպես ստեղծագործություններն ընթերցելիս, այնպես էլ լեզվական առաջադրանքներ կատարելիս) գործնական ճանապարհով քննարկվում են գրեթե յուրաքանչյուր դասի ընթացքում և գրվում գրատախտակին;

Մայրենի դասագրքերի մեթոդական կառույցներում տրված բոլոր առաջադրանքների կատարումը նպաստում է աշակերտների թույլ տված ուղղագրական սխալների կանխմանը, բառապաշարի հարստացմանը, խոսքի և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցում տրված ցանկացած առաջադրանքի բովանդակությունը դասարանում հանգամանորեն բացատրվում է, ինչպես մեր, այնպես էլ աշակերտների կողմից՝ պարզելու համար թե արդյոք բոլոր աշակերտներն են հասկացել տրված առաջադրանքը, հստակեցրել նպատակը; Որպեսզի բոլոր աշակերտների համար պարզ և մատչելի դառնան ուղղագրական կանոնները, ըստ ծրագրային նյութի: Մենք առանձնացնում ենք ուղղագրական արժեք ներկայացնող բառերը, որոշում ենք, թե որ կանոններին է ենթարկվում դրանց ուղղագրությունը, առանձնացնում ենք այն հնարը, որի միջոցով աշակերտները պետք է յուրացնեն տվյալ բառի ուղղագրությունը:

Բոլոր առաջադրանքները նպաստում են ուղղագրական սխալների կանխմանը, բառապաշարի հարստացմանը, խոսքի և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:


Մենք տարեսկզբին ուսումնասիրեցինք երկրորդ դասարանի 27 աշակերտների թույլ տված տառասխալները թելադրություն գրելիս : Բացահայտեցինք և դասակարգեցինք նրանց թույլ տված սխալների տեսակները : Սովորողներից 7-ը թույլ էին տվել տառերի բաց թողումներ(19%), 5 աշակերտ բառերը գրել էին ՝ խախտելով տառերի հաջորդականությունը (13%): Աշակերտները թույլ էին տվել նաև ուղղագրական արժեք ներկայացնող բառերում տառասխալներ .

1 տառասխալ – 5 աշակերտ(13%)

2 տառասխալ - 4 աշակերտ(12%)

3 տառասխալ -3 աշակերտ(7%)


4 և ավելի տառասխալ - 6 աշակերտ(16%):



Այս թելադրության նպատակը տարեսկզբին աշակերտների մնացորդային գիտելիքների ստուգումն էր:Նկատի ունենալով գրավորի արդյունքներն ու աշակերտների թույլ տված սխալների տեսակները՝ մենք մշակեցինք ուղղագրական վարժությունների համակարգ և իրականացրինք թելադրությունների տարբեր տեսակներ, որոնց մեջ ներառված էին նաև աշակերտների կողմից ուսումնական տարվա սկզբին թույլ տված ուղղագրական սխալների խմբին պատկանող բառեր: Տարեվերջին մեր տված թեմատիկ գրավորների արդյունքը այսպիսին էր: 27 աշակերտից տառեր կամ վանկեր էին բաց թողել ընդամենը

Արդյունքներն այսպիսին էին.

- 2 աշակերտ 1 տառասխալ էր թույլ (5,4%) ,
- 1 տառասխալ էր թույլ տվել՝ 3 աշակերտ (7%),
- 2-3 տառասխալ էր թույլ տվել՝ 2 աշակերտ (3 %),
- 4 և ավելի տառասխալ էր թույլ 2 աշակերտ (3%),



Աշակերտների թույլ տրված սխալները մենք հիմնավորում ենք նաև մի շարք այլ հանգամանքներով:

Մեր կողմից երկրորդ դասարանում կազմակերպված հինգշաբաթյա դիտարկման արդյունքում, որի ընթացքում ուսումնասիրվել են . բառ, արմատ, պարզ բառ, ածանցավոր բառ, բարդ բառ, բարդ և ածանցավոր բառերի ուղղագրությունը թեմաները, տրվել են տասը ուսուցողական թելադրություն և մեկ թեմատիկ գրավոր աշխատանք /թելադրություն/ նպատակ ունենալով թելադրությամբ կատարել ախտորոշում .

- անցած նյութի յուրացման ,
- անսխալ գրավոր խոսք կառուցելու,
- ուսուցողական – բացատրական ուղիներով սխալների կանխումն ապահովելու ուղղությամբ:

Ուսուցողական գրավորներն , ինչպես նաև թեմատիկ գրավոր աշխատանքը հանգամանորեն վերլուծվել են , կատարվել են սխալների ուղղումներ , արվել են հետևություններ:Այս աշխատանքներն տվել են իրենց դրական արդյունքը:Ախտորոշման արդյունքում արձանագրվել է դրական աճ (առաջադիմության ,աշխատանքի կատարման որակի , միջին գնահատականի):Ցուցանիշները գոհացուցիչ են, քանի որ տեղին , ժամանակին և նպատակային աշխատանքներ են կազմակերպվել: Տես աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1:

Թիվ	Թեկադրության տեսակը	Աշակերտների քանակը	Գնահատականներ										Առաջադիմություն %	Որակ %	Միջ. գնահատական
			10	9	8	7	6	5	4	3	2	1			
			1	Հնչյունային	30	1	12	8	2	4	1	1			
2	Հնչյունային	30		12	9	3	4	1		1			97%	80%	7.7
3	Առարկայական	30		13	8	4	3	1	2				100%	83%	8
4	Առարկայական	30		13	8	5	2	1					100%	86%	7,2
5	Ընտրովի	30		15	7	4	2	1	1				100%	86%	8
6	Նախազգուշական	30		15	8	3	2	1	1				100%	87%	8
7	Նախազգուշական	30		15	9	3	2						100%	90%	8,1
8	Նախազգուշական	30		15	9	2	3	1					100%	90%	8,1
9	Ընտրովի	30		14	8	4	2	1	1				100%	93%	8
10	Ընտրովի	30		16	10	2	1	1					100%	93%	8,3
11	Թեմատիկ	30		16	8	5	1						100%	97%	8,3

Առաջարկություններ

Երեխաների ուղղագրական կարողության ձևավորման գործընթացը կազմակերպելիս մենք հաշվի ենք առնում, որ նրանք բառն արտասանում են ամբողջությամբ, սակայն գրում են՝ մաս-մաս արտասանելով և համադրելով: Ավտոմատացված և չգիտակցված գործընթացներն արդյունավետ չեն, քանի որ ուղղագրական հմտությունների ձևավորման նպատակով բառերի առանձին խմբերի բազմիցս գրելը չի տալիս ցանկալի արդյունք. երեխաները շարունակում են կատարել սխալներ:

Մեր մանկավարժական երկար տարիների փորձը ցույց է տվել, որ քերականական կանոնների իմացությունն, անշուշտ, կարևոր է գրագետ գրելու գործընթացում, սակայն երեխաներն իրենք պետք է ձևակերպեն դրանք՝ բխեցնելով լեզվական վարժությունների միջով անցած ուղուց: Հակառակ դեպքում՝ գիտելիքը կմնա գիտելիքի մակարդակում, այն չի դառնա կարողություն: Մենք բազմիցս նկատել ենք, որ երեխան վարժ, առանց շփոթվելու ասում է ուղղագրական կանոնը, սակայն թույլ է տալիս այդ իսկ կանոնին վերաբերող սխալներ:

Անկախ նրանից, թե որ մեթոդն է ընտրվում ուղղագրության ուսումնասիրման համար՝ պիտի առաջնորդվել ուսուցման՝ **պարզից բարդը, ծանոթից անծանոթը** գնացող սկզբունքով: Ուղղագրական կարողության ձևավորման ու զարգացման գործընթացում ուսուցումն իրականացվում է իմացածի վրա նորի կառուցմամբ, այսինքն՝ **պարուրածն սկզբունքով**. անբաղաձայն անցածին:

Մեթոդական ճիշտ աշխատանքի դեպքում հնարավոր է խնդիրը լուծել որոշակի աշխատանքների համալիրի միջոցով: Այս աշխատանքի առաջին և կարևոր պահանջը **համակարգայնությունն** ու **պարբերականությունն** է, առանձին վերցրած՝ մեկը մյուսի հետ կապ չունեցող, մեկը մյուսին չլրացնող վարժությունները չեն կարող արդյունավետ լինել, ավելին՝ դրանց տրամադրած ժամանակը կարող է նույնիսկ կորած համարվել:

Եզրակացություն

1. Ուղղագրական հմտությունների ձևավորման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է առաջին հերթին երեխայի զարգացած հնչյունային լսողության և վերարտադրման կարողության առկայությամբ: Նշանակում է անհրաժեշտ է բժախնդիր աշխատանք իրականացնել երեխաների հնչյունային լսողության զարգացման, վերլուծական-համադրական մտածողության ձևավորման ուղղությամբ :
2. Կրտսեր դպրոցականների ուղղագրական հմտությունների ձևավորման համար բառերի առանձին խմբերի բազմիցս գրելը ոչնչով չի օգնում: Այդպիսի գործընթացը չգիտակցված չէ, երեխան կարող է տասն անգամ գրել միևնույն բառը (մեխանիկորեն) և տասնմեկերեք անգամ սխալվել:
3. Ուղղագրական հմտությունների արդյունավետորեն կմշակվեն և կդառնան աշակերտի սեփականությունը ոչ թե առանձին բառերը ճիշտ գրելու ուղղությամբ աշխատանք իրականացնելով, այլ մեկ ընդհանուր կանոնին վերաբերող տարաբնույթ վարժությունների գիտակցական կատարման ճանապարհով :
4. Ինչպես ցանկացած նյութ ուսումնասիրելիս, այնպես էլ ուղղագրական կարողության ձևավորման ու զարգացման գործընթացում պիտի առաջնորդվել ուսուցման՝ պարզից բարդը, ծանոթից անծանոթը գնացող սկզբունքով :
5. Բոլոր առողջ երեխաները կարող են յուրացնել հայերենի ուղղագրությունը. պարզապես կարևոր է գիտակցել, որ բոլոր երեխաների համար ընդունելի չեն ուղղագրական հմտությունների ձևավորման միևնույնն մեթոդն ու ժամաքանակը, վարժությունների տեսակն ու քանակը :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Ս, Պատկերագարդ քերականություն-2,Եր., Էդիտ –Պրինտ , 2017:
2. Գյուլամիրյան Ջ, Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների ձեռնարկ ,Եր. Չանգակ, 2014:
3. Գյուլամիրյան Ջ: Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր.Չանգակ 2018:
4. Էդիլյան Գ., Լեզվի ուսուցման մեթոդիկա Եր., 1931:
5. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ. Գործնական աշխատանքներ մայրենիից Եր., Չանգակ, 2012:
6. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Մուսայելյան Ս. Գնահատման նյութերի ժողովածու: Թեմատիկ գրավոր աշխատանքներ-2: Արտագրություն, թելադրություն, փոխադրություն Եր., Չանգակ 2012:
7. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ. Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների, շարադրությունների ձեռնարկ, Եր., Չանգակ 2012:
8. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ, Եր. 2011:
9. «Նախաշավիղ» 5-6, 2002թ: գիտամեթոդական հանդես:
10. «Նախաշավիղ» 1, 2017թ: գիտամեթոդական հանդես:
11. Տեր-Գրիգորյան Ա. Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., Լույս, 1980:
12. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ: « Մայրենի-2», Էդիտ Պրինտ, Եր., 2016թ:
13. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ: « Մայրենի-3»,2017:
14. ՀՀ կրթական չափորոշիչներ , Անտարես , Եր., 2011:
15. Տարրական դպրոցի մայրենի առարկայական ծրագիր ,Եր., Անտարես, 2011: